

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին: Ավելին իմանալու համար ծանոթացեք սույն փաստաթղթի վերջում ներկայացված հեղինակային իրավունքի վերաբերյալ նշումներին:

© Council of Europe/European Court of Human Rights, 2013. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court. For further information see the full copyright indication at the end of this document.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour. Pour plus de renseignements veuillez lire l'indication de copyright/droits d'auteur à la fin du présent document.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային տեղեկատու թիվ 96

2007թ. ապրիլ

Church of Scientology Moscow-ն ընդդեմ Ռուսաստանի – 18147/02

Վճիռ 05.04.2007թ. [Բաժանմունք I]

Հոդված 11

Հոդված 11-1

Հավաքների և միավորման ազատություն

Վերագրանցման անհիմն մերժում, որի հետևանքով դիմումատու միավորումը կորցրել է իր իրավաբանական անձի կարգավիճակի.

Փաստեր. Դիմումատուն կրոնական միավորում է, որն ունի իրավաբանական անձի կարգավիճակ և պաշտոնապես գրանցվել է 1994թ.: 1997թ. ուժի մեջ է մտնել Խղճի ազատության և կրոնական միավորումների մասին օրենքը՝ համաձայն որի այն բոլոր կրոնական միավորումները, որոնք նախկինում ձեռք էին բերել իրավաբանական անձի կարգավիճակ, պարտավոր էին իրենց կանոնադրությունը համապատասխանեցնել սույն օրենքին և մինչև 2000թ. վերջ դիմել վերագրանցման համար: 1998 և 2005թթ. դիմումատուն վերագրանցման նպատակով 11 անգամ դիմել է Մոսկվայի Արդարադատության գերատեսչությանը: Դրանցից մի քանիսով դիմումներին ընթացք չի տրվել այն հիմքով, որ դիմումատուն չի ներկայացրել վերագրանցման համար պահանջվող փաստաթղթերի ամբողջական փաթեթը: Հետագայում իրավասու շրջանային դատարանը ներկայացրեց մերժման կոնկրետ հիմքերը՝ մասնավորապես նշելով, որ դիմումատուն չի տրամադրել կանոնադրության և այլ փաստաթղթերի բնօրինակները: Դատարանը նաև նշեց, որ դիմումատուի ներկայացրած գիրքը բավարար տեղեկություններ չէր պարունակում Սայենթոլոգիա աղանդի հիմնական սկզբունքների և ավանդույթների վերաբերյալ: Ներկայացված չորս դիմումները չէին ուսումնասիրվել այն հիմքով, որ բաց էր թողնվել դիմումների վերագրանցման համար սահմանված ժամկետը: Միևնույն ժամանակ Դատարանը գտավ, որ Արդարադատության գերատեսչության կողմից դիմումատուին վերագրանցելու մերժումն եղել է անօրինական և անհամատեղելի միջազգային իրավունքի

չափանիշների հետ: Այն եզրահանգեց, որ Արդարադատության գերատեսչությունը դիմումատուի վերագրանցումը չիրականացնելու նպատակով, ըստ էության, դիմել էր խորամանկության հնարքների և նշեց, որ այն միավորումը, որ չունի իրավաբանական անձի կարգավիճակ, զրկվում է կրոնական արարողություններ և պաշտամունքներ անցկացնելու, կրոնական գրականություն ստանալու և տարածելու կամ բանկային հաշիվ ունենալու հնարավորությունից: 2000թ. դեկտեմբերին Դատարանի որոշումը դարձավ պարտադիր և կատարման ենթակա: Այնուհանդերձ, Արդարադատության գերատեսչությունը հրաժարվեց կատարել այդ որոշումը և 2001թ. վերադաս մարմնի կողմից որոշումը չեղյալ համարվեց: 2003թ. դիմումատուն նոր բողոք ներկայացրեց Արդարադատության գերատեսչության դեմ, քանի որ վերջինս համառորեն չէր վերագրանցում միավորումը: Ի վերջո, դատարանները գտան, որ դիմումատուի փոփոխված կանոնադրությունը չուսումնասիրելու հանգամանքը չի ունեցել որևէ օրինական հիմք և կարգադրեց Արդարադատության գերատեսչությանը վերանայել վերագրանցման համար ներկայացված դիմումը: Միայն վերջերս Արդարադատության գերատեսչությունը մերժել էր դիմումատուի ներկայացրած վերջին դիմումը այն հիմքով, որ նա չէր ներկայացրել որևէ փաստաթուղթ, որը կվկայեր դիմումատուի՝ Մոսկվայում առնվազն տասնհինգ տարի գործունեություն ծավալելու մասին:

Բրավունք. Տեղի էր ունեցել միջամտություն դիմումատուի՝ միավորվելու ազատության իրավունքի իրականացմանը, քանի որ վերջինս չէր վերագրանցվել և այդպիսով ամբողջությամբ սահմանափակվել էր դիմումատուի կրոնական գործունեությունը: Արդարադատության գերատեսչությունը հրաժարվել էր ընթացք տալ վերագրանցման համար ներկայացրած դիմումին, հիմք ընդունելով այն, որ դիմումատուն իբր չի տրամադրել պահանջվող փաստաթղթերի ամբողջական փաթեթը: Արդարադատության գերատեսչությունը չէր մատնանշել, թե ինչ տվյալներ կամ փաստաթղթեր են բացակայում՝ պնդելով, որ նա իրավասու չէր դա անելու: Նման մոտեցումը ոչ միայն հակասական էր, այլ նաև զրկել էր դիմումատուին դիմումը փոփոխելու կամ այն նորից ներկայացնելու հնարավորությունից: Ավելին, նման մոտեցումը հակասում է ներպետական օրենսդրության՝ համաձայն որի մերժումը պետք է հիմնավորված լինի: Հետևաբար, Արդարադատության գերատեսչության գործողությունները կամայական բնույթ էին կրել և «օրենքով նախատեսված» չէին: Շրջանային դատարանի կողմից նշված փաստարկները և մասնավորապես այն փաստարկը, որ դիմումատուն չի ներկայացրել որոշ փաստաթղթերի բնօրինակներ, օրենքով հիմնավորված չեն եղել, քանի որ ո՛չ Խղճի ազատության և կրոնական միավորումների մասին օրենքը և ո՛չ էլ այդ ոլորտը կարգավորող որևէ այլ փաստաթուղթ չեն ներառում վերոնշյալ պահանջը: Ավելին, այն պահանջը՝ համաձայն որի դիմումին պետք է կցված լինեին փաստաթղթերի բնօրինակները, չափազանց դժվար և նույնիսկ անիրագործելի էր՝ հաշվի առնելով այն, որ Արդարադատության վարչությունը իրավական որևէ պարտավորություն չի ունեցել դիմումին կցված փաստաթղթերի բնօրինակները վերադարձնելու հարցում: Ամեն դեպքում Արդարադատության գերատեսչությունն իր տրամադրության տակ ունեցել է վիճարկվող փաստաթղթերի բնօրինակները, որոնք երբևիցե չեն վերադարձվել դիմումատուին՝ դեռևս վերագրանցման առաջին դիմումը ներկայացնելուց հետո: Հետևաբար, շրջանային դատարանի այն որոշումը՝ համաձայն որի դիմումատուն պարտավոր էր ներկայացնել պահանջվող փաստաթղթերի բնօրինակները, որևէ փաստացի կամ իրավական հիմք չի ունեցել: Ավելին, դատարանը չի մեկնաբանել, թե ինչու դիմումատուի կողմից ներկայացված գիրքը բավարար տեղեկություններ չէր պարունակում Սայենթոլոգիա աղանդի հիմնական սկզբունքների և ավանդույթների վերաբերյալ և հետևաբար, չի հստակեցրել սույն գործով կիրառվող իրավական նորմերը և հստակ ցուցումներ չի տվել դիմումատուին, թե ինչպիսին պետք է լինի ամբողջական և համարժեք դիմումը: Ինչ վերաբերում է այն հարցին, որ դիմումատուն չի ներկայացրել դիմումը սահմանված ժամկետում, ապա դա հանդիսացել է Արդարադատության գերատեսչության կողմից դիմումատուի նախկինում ներկայացրած դիմումների մերժման ուղղակի հետևանքը: Եվ վերջապես, այն պահանջը՝ համաձայն որի

դիմումատուն Մոսկվայում առնվազն տասնհինգ տարի գործունեություն ծավալելու փաստը վկայող փաստաթուղթ պետք է ներկայացնեն, նույնպես անհիմն էր, քանի որ համաձայն Սահմանադրական դատարանի կայացրած որոշման՝ այն կազմակերպությունները, որոնք հիմնադրվել են նախքան 1997թ. Խղճի ազատության և կրոնական միավորումների մասին օրենքի ուժի մեջ մտնելը, պարտավոր չեն ներկայացնել նմանատիպ փաստաթուղթ, ինչը դիմումատուի դեպքում տեղի չէր ունեցել: Իրավական հիմքեր չեն ունեցել այն փաստարկները, որոնց հիման վրա մերժվել էր դիմումատուի վերագրանցումը, քանզի չէր ապացուցվել այն փաստը, որ միավորման սոցիալական և ծավալած կրոնական գործունեությունը նրա գոյության երեք տարիների ընթացքում խախտել են Ռուսաստանի ներպետական օրենսդրությունը կամ այդ ոլորտը կարգավորող որևէ այլ փաստաթուղթ: Տեղական իշխանությունները գործել են անբարեխղճորեն և չեն կատարել իրենց չեզոք և անկողմնակալ լինելու պարտականությունները vis-à-vis դիմումատուի կրոնական համայնքի:

Եզրակացություն. 11-րդ հոդվածի խախտում՝ 9-րդ հոդվածի հետ համակցությամբ:

Հոդված 41. 10,000 եվրո (EUR)՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

© Council of Europe/European Court of Human Rights
This summary by the Registry does not bind the Court.

Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դատարանի քարտուղարության այս ամփոփումը պարտադիր չէ Դատարանի համար

Սեղմեք այստեղ [Նախադեպային տեղեկատվությունների համար](#)

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պաշտոնական լեզուներն են ֆրանսերենը և անգլերենը: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին, որը պատասխանատու չէ թարգմանության որակի համար: Այն կարելի է բեռնել HUDOC-ից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տվյալների բազայից (<http://hudoc.echr.coe.int>), կամ տվյալների ցանկացած այլ բազայից, որին HUDOC-ը տրամադրել է փաստաթուղթը: Այն կարող է վերաթողարկվել ոչ առևտրային նպատակներով՝ պայմանով, որ գործի անվանումը ներկայացվի ամբողջական և ուղեկցվի վերը նշված հեղինակային իրավունքի նշումներով, ինչպես նաև Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդին հղումով: Առևտրային նպատակներով սույն թարգմանությունը մասնակիորեն կամ ամբողջապես օգտագործելու դեպքում, հարկ է այդ մասին տեղեկացնել հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int

© Council of Europe/European Court of Human Rights, 2013

The official languages of the European Court of Human Rights are English and French. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court, nor does the Court take

any responsibility for the quality thereof. It may be downloaded from the HUDOC case-law database of the European Court of Human Rights (<http://hudoc.echr.coe.int>) or from any other database with which the Court has shared it. It may be reproduced for non-commercial purposes on condition that the full title of the case is cited, together with the above copyright indication and reference to the Human Rights Trust Fund. If it is intended to use any part of this translation for commercial purposes, please contact publishing@echr.coe.int.

©Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013

Les langues officielles de la Cour européenne des droits de l'homme sont le français et l'anglais. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour, et celle-ci décline toute responsabilité quant à sa qualité. Elle peut être téléchargée à partir de HUDOC, la base de jurisprudence de la Cour européenne des droits de l'homme (<http://hudoc.echr.coe.int>), ou de toute autre base de données à laquelle HUDOC l'a communiquée. Elle peut être reproduite à des fins non commerciales, sous réserve que le titre de l'affaire soit cité en entier et s'accompagne de l'indication de copyright ci-dessus ainsi que de la référence au Fonds fiduciaire pour les droits de l'homme. Toute personne souhaitant se servir de tout ou partie de la présente traduction à des fins commerciales est invitée à le signaler à l'adresse suivante : publishing@echr.coe.int.